## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 մայիսի 2016թ. թիվ 131-Ա

### «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊՓԲԸ-Ի ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «իզ» կետի, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2015թ. մայիսի 11-ի «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 139-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. մայիսի 3
ք.Վանաձոր